ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 154-Ա 03 մարտի 2026 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ N 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԻՀԼԵՆ ՄԱՐՏՈՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՍՄԻԿ ՈՒՄՐՇԱՏՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 60-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Վիհլեն Մարտոյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վիհլեն Մարտոյանին 2026 թվականի մարտի 12-ից 2025 թվականի մարտի 20-ը ներառյալ տրամադրել չվճարվող արձակուրդ (9 օր):

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վիհլեն Մարտոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունների և պարտականությունների կատարումը վերապահել

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Ումրշատյանին (առանց վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

03.03.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ